Glendale Unified School District
Սննդառության ծառայությունների բաժանմունք
349A W. Magnolia Avenue
Glendale, California 91204
Phone: (818) 552-2677

Հարգելի ծնող կամ խնամակալ,

Մենք ձեր օգնության կարիքն ունենք: Խնդրվում է լրացնել 2017-2018 թ. դիմումնագիրը՝ անվճար և զեղչված գներով ճաշ ստանալու համար: Նահանգի տեղական ինքնակառավարման ֆինանսավորման նոր բանաձևը մեծապես կախված է հանրային դպրոցներում անվճար և զեղչված գներով ճաշ ստացող աշակերտների թվից: Այս գործոնը հաշվարկման տեսակետից շատ ազդեցիկ է և կարող է միլիոնավոր դոլար գումար առաջացնել, որն անհրաժեշտ է մեր դպրոցներում առաջատար ծրագրեր մշակելու համար:

## Օգուտները՝ ձեր և աշակետների համար

- Անվճար կամ զեղչված գներով նախաճաշ և ճաշ
- Advanced Placement քննության համար $95-ի փոխարեն վճարել $5
- Անվճար SAT և ACT քննություններ
- Անվճար դիմումնագիր և արձանագրություն քոլեջի համար
- Անվճար ավտոբուսի ծառայություն Քլարկ Մագնետ ավագ դպրոց հաճախելու համար
- Ինտերնետի, գազի, ջրի, հոսանքի, հեռախոսի համար զեղչեր

## Օգուտները՝ կրթաշրջանի համար

- Զեղչված գնով տեխնոլոգիայի ենթակառույց՝ ինտերնետի հնարավորություններից օգտվելու համար
- Լրացուցիչ դրամական միջոցներ՝ աշակերտի ուսուցմանն աջակցելու համար